ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇ

Շրջանակի մեջ վերցրու 1 – 10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները:

1 Գտի՛ր այն հնգանիշ թիվը, որի հարյուրավորը 5 է, միավորը 4, իսկ մնացած կարգերում գրված է 7:

1) 77475
2) 77574
3) 75774
4) 74775

2 Որքանո՞վ կմեծանա երկնիշ թիվը, եթե նրա գրությանը ձախից կցագրենք 5 թվանշանը:

1) 5-ով
2) 50-ով
3) 500-ով
4) 5000-ով

3 Ընտրի՛ր տրված թվերից այն թիվը, որը 6-ի հնգապատիկից մեծ է 10-ով:

1) 21
2) 40
3) 56
4) 60

4 Ընտրի՛ր տրված թվանշաններից այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն. 7 կմ 50 մ > 7 կմ * 1մ

1) 4
2) 5
3) 6
4) 7

5 Ընտրի՛ր այն շարքը, որտեղ թվերը դասավորված են նվազման կարգով:

1) 2466, 5159, 78427, 62436
2) 2466, 5159, 62436, 78427
3) 78427, 62436, 2466, 5159
4) 78427, 62436, 5159, 2466

6 Անին գնեց 800 գ պանիր: Նա պիցայի համար օգտագործեց այդ պանրի $\frac{1}{4}$ մասը: Քանի՞ գրամ պանիր նա օգտագործեց:

1) 100 գ
2) 200 գ
3) 400 գ
4) 600 գ

7 Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է **5 կգ 7 գ** -ը գրամներով:

1) 507 գ
2) 5700 գ
3) 5070 գ
4) 5007 գ

8 Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է **5 ժ 42 ր**-ն րոպեներով:

1) 542 ր
2) 292 ր
3) 342 ր
4) 162 ր

9 Քառակուսու երկու կողմերի երկարությունների գումարը հավասար է 28 սմ: Գտի՛ր քառակուսու պարագիծը: Նշի՛ր ճիշտ պատասխանը:

1) 14 սմ
2) 56 սմ
3) 112 սմ
4) 196 սմ

10 Նշի՛ր այն գծապատկերը, որի $\frac{5}{8}$ մասը ներկված է:



1) 2) 3) 4)

11- 15-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրիր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:

11 Հաշվի՛ր բեկյալի երկարությունը, եթե նրա կողմերի երկարությունները 15 սմ, 27 սմ, 35 սմ և 43 սմ են:

Պատ.՝……

12 Հաշվի՛ր բոլոր այն երկնիշ թվերի գումարը, որոնց միավորը 2 է:

Պատ.՝……

13 Դի՛ր փակագծերն այնպես, որ ստացվի հավասարություն:

$3200 : 40 + 20 \cdot 8 = 800$

14 Հաշվի՛ր $2536 + 45 \cdot (48240 : 80 – 503)$ արտահայտության արժեքը:

Պատ.՝……

15 Կռահի՛ր օրինաչափությունը և տրված թվերից հետո ավելացրո՛ւ ևս մեկ թիվ:

1, 5, 10, 16, ...:

16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված ներկայացրու առաջադրանքներից հետո նշված տեղում:

16 Ուղղանկյան լայնությունը 45 մ է, որը կազմում է երկարության $\frac{1}{3}$ մասը: Գտի՛ր ուղղանկյան մակերեսը:

Պատ.՝……

17 Գնացքը երկու օրում միևնույն արագությամբ անցավ 1800 կմ ճանապարհ: Առաջին օրը նա ճանապարհի վրա ծախսեց 12 ժամ, իսկ երկրորդ օրը՝ 4 ժամ պակաս: Որքա՞ն ճանապարհ նա անցավ առաջին օրը: